ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/9»

ք. Երևան «03» 05 2018 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը, ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավարի ժ/պ Հ. Գևորգյանի, որը գործում է ծառայության կանոնադրության. հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Գլոբալ Սոլուշն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռաֆայել Աբովյանի, Նար ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Մադլենա Վիրաբյանի, որոնք գործում են իրենց կանոնադրությունների հիման վրա, համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) միասին (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում էլեկտրոնային կառավարման համակարգում փոփոխությունների և լրացումների անհրաժեշտ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4800000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ԿԱՏԱՐՈՂ 1	ԿԱՏԱՐՈՂ 2
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ ք. Երևան, Կոմիտասի 49/2 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության Հ/Հ 900013404018 ՀՎՀՀ 00454227	**Գլոբալ Սոլուշն ՍՊԸ** **Կորյունի 6ա** **ՀՎՀՀ 00908278** **h/h 193006642 1540100** **տնօրեն** **Ռ.Աբովյան**	**Նար ՍՊԸ** **Ջրվեժ, Մայակ թաղ. 2-2** ՀՎՀՀ 02524402 h/h տնօրեն Մ.Վիրաբյան
Աշխատակազմի ղեկավարի ժ/պ Հ. Գևորգյան /ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«08» 08 2018 թ. կնքված
«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/9» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72221130/3	Տեխնիկական բնութագիրը ստորև	դրամ	4800000	1	ք. երևան, Կոմիտասի 49/2	պայմանագրի կնքման օրվանից հաշված 30 օրվա ընթացքում

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության էլեկտրոնային կառավարման միասնական համակարգում նոր մոդուլի՝ պարտադիր սպանդանոցային մորթի կազմակերպման և կառավարման ենթահամակարգի մշակում և ինտեգրում էլեկտրոնային կառավարման միասնական համակարգին

I. Նախաբան

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) մշտապես և հետևողականորեն շարունակում է Ծառայության գործունեության և դրա կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման գործընթացը՝ ժամանակակից ենթակառուցվածքների և էլեկտրոնային կառավարման նոր լուծումների ներդրման միջոցով՝ Ծառայության աշխատակազմի գործունեության թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև Ծառայության և քաղաքացիների, տնտեսավարողների միջև փոխգործակցության դյուրացման նպատակով:

Մասնավորապես, 2017թ.-ին աշխատանքներ են տարվել Ծառայության էլեկտրոնային կառավարման միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ, որը կսպասարկի Ծառայության հիմնական գործառույթների կատարումը բոլոր փուլերում: Այդ նպատակով մրցույթ է իրականացվել՝ Ծառայության էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի գործածման նպատակով անհրաժեշտ նոր մոդուլների ստեղծման և ուսուցման, նախկին մոդուլների լրամշակման և ուսուցման, ուսուցողական ձեռնարկների ստեղծման, անհրաժեշտ ծրագրավորման աշխատանքների կատարման և հետագա սպասարկման ծառայությունների մատուցման ուղղությամբ: Մրցույթը հաղթող ճանաչված կազմակերպության կողմից իրականացվել են համակարգի մշակման և ծրագրավորման աշխատանքները:

Համակարգը նախատեսում է մի շարք օգտատերերի դերեր, որի արդյունքում իրականացվում են Ծառայության հետևյալ հիմնական գործառույթները.

·Ծառայության ամբողջ փաստաթղթաշրջանառության տեղափոխումը էլեկտրոնային միջավայր, ստորաբաժանումների միջև տեղեկատվության առավել դյուրին փոխանակումը, որը ապահովում է ՍԱՊԾ գործառույթների իրականացման արագություն, ժամանակի և միջոցների խնայում,

·Տեսչական աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը՝ իրական ժամանակում գրանցելով կատարված ստուգումներն ու դիտարկումները, դրանց արդյունքների հիման վրա հաշվետվությունների կազմում և յուրաքանչյուր դեպքի համար ամբողջական հետագծելիության ապահովում,

· Մննդի շղթայի օպերատորների, արտահանող կազմակերպությունների, երրորդ երկրների, ինչպես նաև հաց և միս տեղափոխող փոխադրամիջոցների սանիտարական անձնագրերի ռեեստրների վարումը ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով, որն էլ ազատում է սխալանքներից և դրանց հետ կապված խոչընդոտներից և այլն:

ՍԱՊԾ Միասնական համակարգը նաև փոխկապակցվել է Հանրապետությունում գործող էլեկտրոնային տվյալների շտեմարանների (բազաների) հետ:

Վերը նշված աշխատանքներն արդեն իսկ ավարտվել են, սակայն անհրաժեշտություն է առաջացել գործող համակարգում ավելացնել նոր մոդուլներ եւ լրամշակել արկա որոշ մոդուլներ, մասնավորապես, հիմք ընդունելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունը, համաձայն որի կենդանիների առողջության և մարդկանց զոոնոզ վարակներից պաշտպանության համալիրում անասնաբուժական վերահսկման ենթակա ապրանքներ ներմուծող և արտահանող, մթերատու կենդանիներ պահող, կենդանական ծագման հումքի և մթերքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի, կերատեսակների, անասնաբուժական դեղամիջոցների արտադրությամբ, վերամշակմամբ, պահպանմամբ, փոխադրմամբ, առևտրով կամ իրացմամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են վերամշակել (մշակել), իրացնել, վաճառել, մատակարարել, ներմուծել բացառապես սպանդանոցում կենդանիների սպանդից գոյացած կենդանական ծագման մթերք և կենդանական ծագման հումք: ՀՀ կառավարության կողմից նաև սահմանվել են պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտներն և ժամանակացույցը:

Պարտադիր սպանդանոցային մորթը հնարավորություն կտա կենդանիների մորթը իրականացնելու մաքուր ու քաղաքակիրթ պայմաններում, նաև այն ավելի վերահսկելի է դարձնում այդ գործընթացը՝ բացառելով վարակված կամ հիվանդ կենդանու մսեղիքը մուտքը իրացման ցանց: Այս նորմը ողջ հանրապետությունում կգործի 2018թ.-ի հուլիսի 1-ից, ինչը ենթադրում է, որ մսի իրացումն ու գնումը պետք է կատարվի միայն սպանդանոցային մորթի պայմաններում: Այսօր առկա է 22 սպանդանոց, 20-ն էլ կառուցվում են: Նախատեսվում է հուլիսին Հայաստանում ունենալ 40-70 սպանդանոց:

Նոր ենթահամակարգի ստեղծմամբ և ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի հետ ինտեգրման արդյունքում ակնկալվում է ապահովել սպանդանոցային մորթից գոյացած կենդանական ծագման մթերքի և կենդանական ծագման հումքի համար անասնաբուժական փաստաթղթերի տրամադրումը, գրանցումը, հաշվառումը և ողջ գործընթացի վերահսկումը:

II. Նպատակը

Այս հանձնարարականի հիմնական նպատակն է՝ նոր մոդուլների ծրագրավորում, արկա որոշ մոդուլների լրամշակում և ավելացում արդեն գործող համակարգի մեջ, որի արդյունքում անասնաբուժական փաստաթղթերի տրամադրումը, գրանցումը և հաշվառումը կիրականացվի էլեկտրոնային եղանակով, կապահովվի սպանդանոցների վերահսկման միասնական համակարգ, որը թույլ կտա վերահսկել բացառապես սպանդանոցային մորթի ենթարկված կենդանական ծագման մթերքի շրջանառությունը, սպադանոցային ծագման մսամթերքի ամբողջական հետագծելիությունը մորթից մինչև սպառող իրականացնել կենդանական ծագման մթերքի մակնշումը՝ ներառյալ սպանդանոցի մասին տեղեկություններ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Էլեկտրոնային համակարգում ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն հաշվի առնելով գործող համակարգի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները, ինչպես նաև կիրառվող ծրագրային տեխնոլոգիաները:

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է Պատվիրատուին տրամադրվեն որպես էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովման ընդլայնումներ եւ բարելավումներ /extends and upgrades/:

Պատվիրատուն ծրագրային փոփոխությունների մշակման աշխատանքները իրականացնողին կտրամադրի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերը /source codes/ և տեխնիկական փաստաթղթերը:

Մշակման ընթացքում համակարգի օգտվողի ինտերֆեյսը եւ շտեմարանի առկա տվյալները պետք է պահպանվեն:

Համակարգից օգտվողի ինտերֆեյսը և տվյալների բազայում պահվող տեքստային տեղեկատվությունը պետք է ներկայացվի UNICODE տառատեսակով:

III. Աշխատանքի նկարագրություն

Վերը նշված նպատակն իրագործելու համար Ծառայություններ մատուցողը, պետք է կատարի հետևյալ ծրագրավորման աշխատանքները.

· տվյալների շտեմարանների ստեղծում, մասնավորապես, սպանդանոցների օգտվողների ստեղծում և կառավարում,

· սպանդանոցների գործունեության վարում,

· կենդանատեսակների շտեմարանի ստեղծում և վարում,

· սպանդանոցների օգտվողների շտեմարանի վարում,

· մորթի ավելացում, մորթի վարում (ստեղծում և ամփոփում),

· մորթի արդյունքում ստացված մթերքի առաքման կազմակերպում և կառավարում,

· անասնաբուժական փաստաթղթերի էլեկտրոնային ձևի ստեղծում, տրամադրում և հաշվառում էլեկտրոնային եղանակով,

· անասնաբուժական վկայականների էլեկտրոնային տարբերակի ավտոմատ գեներացում,

· QR կոդի ստեղծում,

· QR կոդով սպառողների կողմից մորթի տվյալների ինֆորմացիայի ստուգում բջջային սարքավորումների միջոցով,

· համակարգի նոր ինտերֆեյսի ստեղծում, որը կինտեգրվի արդեն գործող համակարգի հետ,

· տնտեսավարողների համակարգից օգտվելու թրեյնինգների կազմակերպում:

Տեխնիկական նկարագրություն

Օպերացիոն ենթահամակարգի, տվյալների հիմնապաշարի և ծրագրավորման լեզվի ընտրությունը. վեբ կայքի տեխնիկական իրագործումը պետք է իրականացվի՝ ծրագրավորման Framework-ը՝ Yii, տվյալների հիմնապաշարը՝ MySQL, նախընտրելի օպերացիոն համակարգը՝ Linux-ը, նախընտրելի ապարատային ապահովման պլատֆորմը՝ HP:

Ենթահամակարգի ճարտարապետության մեջ անհրաժեշտ է նախատեսել ինտեգրման հնարավորություններ. համակարգում անհրաժեշտ է ապահովել՝ փոփոխվող բիզնես մոդելներին ադապտացվելու ճկուն ու թեթև մեխանիզմներ, սահմանված բիզնես գործընթացներին դյուրին ինտեգրման հնարավորություն: Տեղեկատվական ենթահամակարգը պետք է ունենա այլ համակարգերի հետ ինտեգրվելու հնարավորություն:

Նշված ենթահամակարգի արդյունավետ աշխատանքն ապահովելու նպատակով այն նաև պետք է փոխկապակցվի ՀՀ-ում գործող տվյալների էլեկտրոնային շտեմարանների հետ, մասնավորապես, ՀՀ կազմակերպությունների API ինտեգրում (e-register), ՀՀ քաղաքացիների API ինտեգրում (ԷԿԵՆԳ), ՀՀ փոխադրամիջոցների API ինտեգրում (police.am):

Տեղեկատվական ենթահամակարգը նաև պետք է ապահովի XML, JSON, SOAP տեխնոլոգիաներով տվյալների մուտքի և ելքի հնարավորություն: Տեղեկատվական ենթահամակարգը պետք է ապահովի ցանկացած ստեղծված կամ փոփոխված փաստաթղթի հետագծելիությունը, հիմքերի վերծանումը:

Ենթահամակարգում տվյալների մուտքագրումը պետք է իրականացվի ինտերնետով՝ միայն բրաուզերի միջոցով, և տվյալները պետք է հասանելի լինեն միայն բրաուզերով: Տեղեկատվական ենթահամակարգի բջջային բրաուզերը պետք է ունենա ճկուն դիզայնի հնարավորություն:

Մուտքագրված տվյալների հավաստիացումը պետք է իրականացվի սերվերի վրա:

Ստանդարտներ և էջկապ

Կայքի էջկապը պետք է կատարվի "xHTML1.0" լեզվով՝ "W3C" ստանդարտներին համապատասխան, անհրաժեշտության դեպքում կարող է կիրառվել նաև "HTML5":

Գրաֆիկական դիզայն

Ենթահամակարգի արտաքին տեսքը պետք է լինի գրավիչ, ապահովի առավելագույն գործածելիություն:

Ծառայություններ մատուցողը պետք է պատվիրատուին ներկայացնի ենթահամակարգի մուտքի (գլխավոր) և ներքին էջերի տեսքը (գրաֆիկական դիզայնը) այլընտրանքային տարբերակով: Պատվիրատուն կներկայացնի իր առաջարկները և դիտողությունները կամ կհաստատի տարբերակներից մեկը:

Օգտվողի միջերեսը պետք է լինի հարմար օգտագործման և դյուրին յուրացման համար: Կիրառվող տերմինները պետք է լինեն հասկանալի և մատչելի վերջնական օգտվողի համար:

Համապատասխանելիություն

Ենթահամակարգը պետք է ապահովի առավելագույն համապատասխանելիություն գոյություն ունեցող հիմնական տարածված որոնման ծրագրային փաթեթների հետ, ինչպիսիք են՝ "EDGE", "Mozilla Firefox", "Opera", "Safari", "Chrome" և այլն:

Ենթահամակարգը պետք է համապատեղելի լինի ինչպես բջջային այնպես էլ անձնական համակարգիչների (PC) էկրանների հետ (responsive design):

Արտադրողականություն

Ենթահամակարգը պետք է աշխատի 24/7 ռեժիմով: Այն պետք է ապահովի սպանդանոցների կողմից իրականացվող մորթի գրանցումներ:

Ենթահամակարգը պետք է կարողանա արդյունավետ կերպով սպասարկել առավելագույնը 100 օգտվողի: Համաժամանակյա ակտիվ օգտվողների առավելագույն շեմը պետք է լինի մինչև 50 օգտվող:

Առավելագույն ծանրաբեռնվածության պայմաններում ենթահամակարգի 95% ֆունկցիոնալության արձագանքման ժամանակահատվածը պետք է կազմի առավելագույնը 10 վայրկյան:

Ենթահամակարգը պետք է աշխատի նվազագույն սեղմելու մեխանիզմով:

Սխալների արտաբերումը պետք է լինի ստանդարտացված, ինֆորմատիվ և ինտուիտիվ՝ եզակի կոդերով, որոնք փոխանցելով մասնագետներին, հնարավորություն կտան արագ լուծել առաջացած խնդիրները:

Տվյալների հոսքը պետք է ապահովվի յուրաքանչյուր մորթի համար 100 տող:

Ենթահամակարգը պետք է աշխատի GPRS ինտերնետի պարագայում:

Լեզուներ և տառաշար

Ենթահամակարգի ինտերֆեյսը և ներքին ադմինիստրատիվ համակարգը և օգտատերերին հասանելի անհատական էջերը միայն հայերեն են: Գրված տեքստային ինֆորմացիայի անխափան ցուցադրման համար հարկավոր է, որպեսզի կայքը գործի "Unicode" (UTF-8) տառաշարի հիման վրա:

Տիրույթի անվանում և տեղակայում (hosting)

Կայքի տիրույթի, ինչպես նաև վերը նշված տեխնիկական պայմանները բավարարող հոսթինգ ծառայության կամ առանձնացված սերվերի տրամադրումը կատարվում է Պատվիրատուի կողմից:

Անվտանգություն

Բովանդակության կառավարման համակարգը և կայքի առաջնային մասի ծրագրային կոդերը ֆիզիկապես պետք է լինեն տարանջատված:

Ծրագրային մակարդակում պետք է իրականացվեն մուտքի թույլատրման (access/authorizaton) մի շարք միջոցառումներ, որոնք ապահովելու են վավերացված մուտքը միայն նախատեսված օգտվողների համար: Մուտքի իրավունքները պետք է հիմնված լինեն դերերի վրա: Յուրաքանչյուր դերի համար պետք է սահմանված լինեն կոնկրետ իրավունքներ:

Պետք է իրականացվեն նաև գաղտնաբառերի պարբերական թարմացման (password expire policy) և մուտքային տարբեր մակարդակների (access level control) ապահովման միջոցառումներ:

Ենթահամակարգը պետք է իրականացնի տեղեկատվության փոփոխության և գործողության գրանցում (log-ging): Օգտագործողի գործողությունները պետք է գրանցվեն գրանցամատյանում: Գրանցումը, ի լրումն այլ տեղեկատվության, պետք է ներառի գործողության ժամը, կատարողի ինքնությունը և այլն:

Թեստավորում և ուսուցում

Կապալառուի կողմից պետք է իրականացվի ենթահամակարգի համալիր թեստավորումը և թեստավորման ընթացքում հայտնաբերված թերությունների վերացումը, ինչպես նաև համապատասխան անձնակազմի ուսուցումը:

Ֆունկցիոնալ նկարագրություն

Տեղեկատվական համակարգը նախատեսված է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից սպանդանոցային մորթից գոյացած կենդանական ծագման մթերքի և կենդանական ծագման հումքի համար անասնաբուժական փաստաթղթերի տրամադրումը, գրանցումը, հաշվառումը և ողջ գործընթացի վերահսկումը:

Ենթահամակարգը պետք է հասանելի լինի գրանցված օգտատերերի համար, որում գրանցված ինֆորմացիան հասանելի կլինի միայն համակարգում գրանցված լինելու և անհատական տվյալներով մուտք գործելու դեպքում:

Ենթահամակարգից օգտվելու համար համապատասխան օգտատերերը պետք է գրանցման հայտ ներկայացնեն ՍԱՊԾ, գրանցումը պետք է իրականացվի ենթահամակարգի ադմինիստրատորի կողմից:

Ենթահամակարգ մուտք գործելու դեպքում օգտատիրոջը պետք է հասանելի լինի անձնական էջը, որի միջոցով հնարավոր կլինի խմբագրել անձնական տվյալները, մուտքագրել և խմբագրել տվյալները:

Ենթահամակարգը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվական ռեսուրսները.

- **Պարտադիր սպանդանոցային մորթի ենթարկված կենդանու սեփականատիրոջ մասին տեղեկատվություն՝ սեփականատիրոջ կազմակերպաիրավական տեսակը, ՀՀՎՀ/Անձնագրի համարը, սեփականատիրոջ անունը, իրավաբանական հասցեն, մորթի նպատակը,**

· Անասնաբուժասանիտարական փորձաքննության վերաբերյալ տեղեկատվություն՝ ԱԲՍՓ իրականացնող կազմակերպության տվյալները, տրված եզրակացության համարը, վերջինիս տրամադրման ամսաթիվը, տրամադրող անասնաբույժի տվյալները,

· Առաքման կազմակերպչի մասին տեղեկատվություն՝ առաքողի կազմակերպաիրավական տեսակը, ՀՀՎՀ/անձնագրի համարը, առաքողի անուն, ազգանունը, առաքողի իրավաբանական հասցեն,

· Փոխադրող կազմակերպության մասին տեղեկատվություն՝ փոխադրող կազմակերպության անվանումը, փոխադրող կազմակերպության իրավաբանական հասցեն, վարորդի անուն, ազգանունը, տրանսպորտային միջոցի մակնիշն ու պետհամարանիշը:

Ենթահամակարգը պետք է ունենա վերլուծական գործիքներ, մասնավորապես, համակարգում առկա տվյալների հիման վրա իրականացնել վերլուծություններ՝ կիրառելով ներդրված վերլուծական գործիքներ: Ենթահամակարգը նաև պետք է ապահովի մուտքագրված տվյալների հիման վրա ամփոփ հաշվետվությունների և վերլուծությունների ձևավորման, գեներացման գործիք և PDF կամ XLS(X) կամ CSV կամ DOC(X) ձևաչափերով դուրս բերման հնարավորություն:

Կենդանիներիների կոնֆիգուրացիա

1. Կենդանատեսակների վարում

Մորթի վարում

1. QR կոդի ստեղծում
2. QR կոդով մորթի տվյալների ինֆորմացիայի ստուգում բջջային սարքավորումների վրա
3. Սպանդանոցային ծագման մթերքի հետագծելիության ապահովում ամբողջ ընթացքում
4. Անհրաժեշտության դեպքում մուտքային տվյալների խմբագրում ադմինիստրատիվ օղակի կողմից:
5. Սպանդանոցների շտեմարանի ստեղծում եւ վարում
6. Սպանդանոցների օգտվողների ստեղծում եւ կառավարում
7. Սպանդանոցների գործունեության կառավարում
8. Սպանդանոցների գործունեության հաշվետվություն
9. Մորթի իրականացման գործընթացի վարում
10. Մորթի իրականացման հաշվետվություն

Օգտվողներ

1. Պաշտոնների շտեմարանի վարում
2. Դերերի շտեմարանի վարում
3. Դերերի կոնֆիգուրացիաների պահում և վարում

API ինտեգրում ամբողջ համակարգում

1. ՀՀ կազմակերպությունների API ինտեգրում

2. ՀՀ քաղաքացիների API ինտեգրում

3. ՀՀ փոխադրամիջոցների API ինտեգրում

Փաստաթղթերի հաշվառում

1. ԵԱՏՄ տեղեկատվության փոխանակման կազմակերպման համաձայնագրին համապատասխան

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԳՆ սննդամթերքի
անվտանգության պետական
ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչության
Հ/Հ 900013404018
ՀՎՀՀ 00454227

Աշխատակազմի
ղեկավարի ժ/պ
Հ. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ 1

Գլոբալ Սոլուշն ՍՊԸ

Կորյունի 6ա

ՀՎՀՀ 00908278

h/h 193006642 1540100

տնօրեն

Ռ.Աբրվյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ 2

Նար ՍՊԸ

Ջրվեժ, Մայակ թաղ. 2-2

ՀՎՀՀ 02524402
h/h
տնօրեն
Մ.Վիրաբյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«08» 08 2018 թ. կնքված
«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/9»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում*		
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	72221130/3	էլեկտրոնային կառավարման համակարգում փոփոխությունների և լրացումների անհրաժեշտ ծառայություններ	**3360000**	**4800000**	**4800000**

ԳՆՈՐԴ

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության
Հ/Հ 900013404018
ՀՎՀՀ 00454227

Աշխատակազմի ղեկավարի ժ/պ
Հ. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ 1

Գլոբալ Սոլուշն ՍՊԸ
Կորյունի 6ա
ՀՎՀՀ 00908278
h/h 193006642 .1540100
տնօրեն
Ռ.Աբովյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ 2

Նար ՍՊԸ
Ջրվեժ, Մայակ թաղ. 2-2
ՀՎՀՀ 02524402
h/h
տնօրեն
Մ.Վիրաբյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՀՀ դրամ

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Հավելված 3
«08» 08 2018 թ. կնքված
«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/9»
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____	_____
գտնվելու վայրը	գտնվելու վայրը	գտնվելու վայրը
_____	_____	_____
հհ	հհ	հհ_____
_____	_____	հվհհ_____
հվհհ	հվհհ	
_____	_____	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը / հազար դրամ/	Վճարման ժամկետը / ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
ազգանուն, անուն	ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«03» 03 2018 թ. կնքված
«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/9»
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Հանձնեց	Ընդունեց
		հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն